Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 21 -ի N 152 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԵՐՔՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ ստորերկրյա ջրերի) արդյունահանման հետ կապված հարաբերությունները:

2. Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում իրենց սեփական կարիքների բավարարման նպատակով ստորերկրյա ջրերի արդյունահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 22-րդ հոդվածով:

3. Իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց սեփական հողամասերի սահմաններում, շահույթ ստանալու նպատակ չհետապնդելով, տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով կարող են անժամկետ իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ երկրի մակերևույթից մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ երկրի մակերևույթից մինչև 5 մետր խորությամբ՝ առանց հորատապայթեցման աշխատանքների իրականացման:

4. Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում իրենց սեփական կարիքների բավարարման

նպատակով՝ սույն կարգի 3-րդ կետում նշված աշխատանքների իրականացման համար օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն և օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն չեն պահանջվում, և իրավաբանական անձինք ու քաղաքացիներն ազատվում են ընդերքօգտագործման հետ կապված վճարներից:

5. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված աշխատանքներն իրավունք ունեն իրականացնելու այն իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա մասին գրավոր տեղեկացրել են լիազոր մարմնին՝ նշելով օգտակար հանածոյի անվանումը, դրա արդյունահանման նպատակը և ծավալները:

6. Գրությանը կից ներկայացվում են հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:

7. Լիազոր մարմինը գրությունը գրանցելուց հետո դրա մասին օրենքով սահմանված կարգով՝ 3-օրյա ժամկետում ծանուցում է դիմող իրավաբանական անձանց և քաղաքացիներին:

8. Իրավաբանական անձինք և քաղաքացիները սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասերի սահմաններում պարտավոր են, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան, պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետևանքով խախտված հողերը բերել անվտանգ վիճակի, ինչպես նաև՝ դրանք դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար պիտանի:

9. Իրավաբանական անձինք և քաղաքացիները սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասերի սահմաններից արդյունահանված՝ պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոները, որոնք օգտագործման

համար պիտանի չեն, պետք է տեղադրեն և պահեն (կուտակեն) պետական կառավարման տարածքային մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առանձնացված տարածքներում՝ հետագայում խախտված հողերի վերականգնման համար օգտագործելու նպատակով:

10. Իրավաբանական անձինք և քաղաքացիները սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասերի սահմաններում՝ պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում ծագած վեճերը լուծում են օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ